



«ԶՐՕՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԼՈՅՍ ՆՈՐ ՄԻՒՌՈՆԻ ԲԵՐՄԱՆ ԱՌԻԹՈՎ ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ»

Սոյն թուականի Հոկտեմբերի 18ը — ուրբաթ — յոյժ ուրախալի եւ մխիթարանքի օր մըն է իրաքահայութեան համար:

Այսօր թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Աւագ Եպս. Ասատուրեան կը մատուցէ Սուրբ եւ անմահ պատարագ, որու ընթացքին կը կատարուի ջրօրհնէքի արարողութիւն «նորաօրհն» Սրբալոյս Միւռոնի բերման առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն:

Առաւօտեան ժամը 9.30ին սկիզբ կ'առնէ Սուրբ պատարագը: Պաղտատի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցին բերնէ բերան լի է հաւատաւոր եւ հարազատ հարիրաւոր զաւակներով:

Յընթացս սրբոյ պատարագի՝ «Հայր Մեր»էն առաջ, եկեղեցոյ Աւագ դռնէն, մեծաշուք թափօրով կը բերուի սրբալոյս նոր Միւռոնը, Մայր Աթոռէն բերուած գեղեցիկ սրուակով: Հաւատացեալ մեր ժողովուրդը յոտնկայս եւ մեծաւ երկիւղի կը դիմաւորէ զայն, Անոր մէջ տեսնելով, ո՛չ միայն Սուրբ Հոգոյ խորհրդանիշը, այլեւ մեր Հայրենեաց անկախութեան Աստուածական յաղթութեան ճառագայթները, որն արդէն Հայոց Հայրապետը յայտարարած էր, իբրեւ «Անկախութեան Միւռոն»...

Ահա խորհրդալի այս պահուն, սրբազան հայրը, ի տես բոլոր ժողովրդեան, նախ Սուրբ Խաչի ընկղմամբ եւ ապա Սրբալոյս Միւռոնի հեղումով կ'օրհնէ ջուրով լի կաթսաները:

Յետ ջրօրհնէքին, Առաջնորդ Սրբազանը կ'ընթերցէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Աստուածընտիր Հայրապետին քարոզը, որը Վեհափառ Հայրապետը խօսած էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Սեպտեմբեր 29ին՝ Սրբալոյս Միւռոնի օրհնութեան առիթով:

Հայոց Հայրապետին խօսքը մեծ խանդավառութեամբ կ'ունկնդրուի իրաքահայ ժողովուրդին կողմէ: Ապա Սրբազան Հայրն ալ իր հերթին խօսքը կը յղէ հարազատ զաւակներուն եւ բոլոր միութենական հաստատութեանց, որոնք կը շեշտէ, որ մեր հաւատացեալ ժողովուրդը պարտի յետ այսու ա՛լ աւելոր լի պատասխանատուն եւ հսկողը ըլլայ իր երկհազարամեայ Մայր եւ Սուրբ Առաքելական եկեղեցոյ, թոյլ չտալով որեւէ օտար եւ մեր ժողովուրդին հաւատաբէլական եկեղեցոյ, մար վտանգաւոր, խորթ եւ անհարազատ ներմուծումներու գայթակղութիւնն, կու գայ ջլատելու մեր ժողովուրդի միասնութիւնը, Աստուածապարգեւ հաւատքն ու չորսհազարամեայ հոգին հայկական: Սրբազան հայրը յատկապէս



Զրօրհնյաց արարողությունից մի պահ

կ'ըսէ իր խօսքին մէջ. «...Եւ ինչպէս Վեհափառ Հայրապետը բնորոշեց, մենք որպէս եկեղեցի եւ ժողովուրդ, պիտի չհանդուրժենք, երբ այլ եկեղեցիներ, մեծ թէ փոքր, արեւմուտքէն եկած մեր եկեղեցոյ ծոցին մէջ մարդորսութեամբ կգբաղին ... երբեք պիտի չհանդուրժենք ո՛չ քրիստոնէական այս գործը: Եթէ այդ քարոզիչները այնքան կարեւորութիւն կուտան քրիստոնէական հաւատքին եւ արեւմուտքէն դէպի Հայաստան կ'արշաւեն մարդորսութեան նպատակաւ եւ եթէ անոնք ինքզինքնին այդքան բժախնդիր կը նկատեն քրիստոնէութիւնը տարածելու, թող երթան եւ քրիստոնէութիւնը քարոզեն ո՛չ քրիստոնէայ ազգերու մէջ, հեթանոսներու մէջ...

Մենք կարիքը չունինք, մեր հաւատքը պակասաւոր հաւատք չէ՛, որպէսզի ուրիշներ գան լրացնելու զայն: Եւ քրիստոնէութիւնը պետական-սաշտօնական կրօն ճանչցած առաջին ազգին քրիստոնէութիւն քարոզելը, ես կը նկատեմ ո՛չ քրիստոնէական արարք մը, արարք ընդդէմ «Էքումենիք» ոգիին, որը կը տիրէ այսօր քրիստոնէայ մեծ ընտանիքին մէջ:

Հետեւաբար պարտք կը համարեմ խօսքս ուղղելու մեր ժողովուրդին, այլեւ մեր միութենական հաստատութիւններուն զգուշ ըլլալու եւ միամտօրէն չվերաբերելու վերոյիշեալ կացութեան նկատմամբ. թող առիթը չտրուի օտար եկեղեցիներու՝ մեր ժողովուրդի ծոցին մէջ քարոզութեամբ զբաղելու: Եւ ձեզի ալ կը դիմեմ սիրելի հաւատացեալներ, որ այս հոծ բազմութեամբ կը գտնուիք այստեղ՝ ներկայ եղաք «Զրօրհնէքի» արարողութեան նոր օրհնուած Սբ. Միտոնով, դո՛ւք ալ ի հարկէ գիտակից էք եւ հարազատ զաւակներն էք եւ կը մնաք ու պիտի մնաք Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Եկեղեցոյ..., կը դիմեմ Զեզի, որպէսզի բոլորս ալ՝ քահանայք եւ ժողովուրդ գիտակցուած նախանձախնդրութեամբ տէրը ըլլանք մեր դարաւոր սրբութիւններուն եւ ժառանգած սովորութիւններուն»:

Սրբազան հոր խօսքէն ետք պատարագը կը շարունակուի: Սուրբ պատարագէն ետք, խումներամ ժողովուրդը կ'ըմպէ օրհնուած ջուրը, Դպրաց Դասին կողմէ կատարուող հոգեպարար շարականներու երգակցութեան ներքոյ, եւ ապա կը մեկնի ի խաղաղութիւն...

Նոյն օրը կէսօրուայ ժամը 1ին, Սրբազան հոր գլխաւորութեամբ եւ հոգեւոր դասին ներկայութեամբ, տեղի կունենայ առաջին մկրտութեան սուրբ խորհուրդը նոր Միտոնով: Սրբազան հայրը, այս ուրախ առիթով, նոր մկրտեալին կը կնքէ Լեւոն անուամբ, նորապսակ եւ անկախ մեր Հայրենիքի նորընտիր՝ վսեմաշուք նախագահ Տիար Լեւոն Տէր Պետրոսեանի անունով:

ՄԱԿԱՐ ԱԲՂ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Պաղտատ,
18 Հոկտ. 1991

